

ՍԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԻ,
ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.162*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց լեզվի բառային կազմը՝ որպես կենսական հարատև իրողություն, մշտանորոգվում ու համալրվում է ներքին և արտաքին միջոցներով: Բառապաշարի ներքին հարստացումը կամ զարգացումը տեղի է ունենում բառակազմական և իմաստաբանական միջոցների ու եղանակների գործադրումով: Հարափոփոխ կյանքը, գիտատեխնիկական թռիչքային զարգացումները, միջմշակութային և միջհաղորդակցական կապերը համաշխարհայնացման արդի դարաշրջանում պատճառ են դառնում նորանոր հասկացությունների ձևավորման և դրանք համապատասխան լեզվական նշաններով արտահայտելու անհրաժեշտության: Նոր սարքավորումները և գիտական ձեռքբերումները համընդհանուր դարձած անգլերեն անվանումներով ու եզրերով ներթափանցում են աշխարհի տարալեզու ժողովուրդների բառապաշար ու մաս դառնում օտարալեզու հանրության բառային կազմի: Հայոց լեզուն ևս անմասն չի մնում համամարդկային այս գործընթացներից: Նորամուտ բազմաթիվ բառեր հաճախ քաղաքացիություն են ձեռք բերում և դառնում են սովորական, կիրառելի, մի շարք հասկացությունների անուններ էլ թարգմանվում կամ պատճենվում են՝ մեր լեզվի բառակազմական օրենքների համաձայն: Այդ ճանապարհով արդի գրական հայերենում ստեղծվել և ստեղծվում են բազմաթիվ գիտական, տեխնիկական և այլ կարգի բառեր ու տերմիններ: Բնական այս գործընթացն անկասելի է և հարակա:

Բանալի բառեր և արտահայտություններ. հայերեն, բառապաշար, բառիմաստ, պատճենում, գոյական, ածական:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի լեզուները զարգանում են ոչ միայն իրենց ներքին միջոցներով, այլև ուրիշ լեզուների հետ ունեցած առնչությունների հիման վրա, և դա ամենից առաջ նկատելի է բառապաշարի մեջ, ինչ-որ չափով նաև հնչյունական, շարահյուսական մակարդակներում: Բառապաշարի ներքին հարստացումը կամ զարգացումը տեղի է ունենում նոր բառեր կազմելով, ինչպես նաև եղած բառերը նոր իմաստներով գործածելով, այսինքն՝ բառակազմական և իմաստաբանական միջոցների ու եղանակների գործադրումով: Ըստ այդմ՝ արդյունքում ունենում ենք ոչ միայն նոր բառեր, այլև բառերի նոր իմաստով գործածություններ: Այս առումով լայն և ընդգրկուն են հայոց լեզվի բառապաշարի հարստացման ուղիները: Առանձնակի ուշադրության են արժանի միջլեզվական մակարդակներում տեղի ունեցող բառային պատճենումները: Մեր լեզուն պատճենումներ է կատարել դեռևս գրաբարյան շրջանում: Հոդվածում ներկայացվում են փոխառության այս տեսակի՝ ժամանակակից հայերենում ի հայտ բերած տարբեր եղանակներն ու միջոցները, նաև դրանց դասավանդման արդյունավետ մոտեցումները: Ուսումնասիրության առաջադիր լեզվական իրողությունները պարզաբանված են համապատասխան օրինակներով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից արևելահայերենում գործածվող մի շարք բառային պատճենումների հիման վրա կատարված է բառագիտական համաժամանակյա քննություն, հարաբերակցող բաղադրիների իմաստային կապերի բացահայտում և հիմնավորում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայոց լեզվի պատմությունից հայտնի է, որ ժամանակի ընթացքում տարբեր լեզուների բառակազմական կաղապարներով ստեղծվել են բառեր, կայուն բառակապակցություններ, դարձվածաբանական միավորներ ու

արտահայտություններ, որոնք՝ որպես լեզվական ներթափանցումներ, պատճառաբանվել են տվյալ լեզուները կրող ժողովուրդների հասարակական, քաղաքական և մշակութային, հաղորդակցական առնչություններով:

Հատկապես վերջին տասնամյակներում ժամանակակից գրական հայերենի բառապաշար ներթափանցել են այնպիսի նոր բառեր, որոնք ավելի շատ օտարաբանություններ են, քան ներքին բառակազմական միջոցներով ու եղանակներով առաջացած բառեր:

Ամեն մի օտար բառ, որը տեղ է գտնում լեզվում, սկզբնապես համարվում է անսովոր և անհարկի գործածություն՝ *օտարաբանություն* կամ ըստ Պ. Պողոսյանի՝ *օտարամոծություն* (Պողոսյան Պ., 1990, Քամայան Ա., 2015): Օտար բառը շարունակաբար գործածվելու ընթացքում դառնում է սովորական, որի պատճառով հաճախ այն համարում ենք *փոխառություն*: Լեզվական այսպիսի միավորների մասին Հ. Պետրոսյանը գրում է. «**Փոխառություն**//займствование, լեզվական այս կամ այն տարրի, հիմնականում բառի անցումը մի լեզվից մյուսին՝ այդ լեզուների շփման, փոխազդեցության հետևանքով (կատարվում է նոր հասկացություններ, իմաստներ կամ եղածների տարբերացումներ արտահայտելու նպատակով)» (Պետրոսյան Հ., 1987): Լեզվի զարգացման որևէ աստիճանում երբեմն դժվար է լինում փոխառությունը և օտարաբանությունը միմյանցից տարբերելը: Տվյալ շրջանում օտարաբանություն համարվող այլալեզու բառը, դարձվածքը, արտահայտությունը, որոնց օտարամուտ լինելը խոսող հանրության կողմից գիտակցվում է, ժամանակի ընթացքում ընկալվում են որպես փոխառություն: «Լեզվաբանական բառարանը» *օտարաբանություն* կամ *օտարություն* հասկացության համարժեք է դիտարկում «այն փոխառյալ բառերը, արտահայտությունները (ոճերը), արտասանության յուրահատուկ եղանակները, որոնք չեն արմատավորվել տվյալ լեզվի մեջ, դիտվում են որպես ընդունված գործուն նորմաներից շեղվող և խորթ լեզվական երևույթներ» (Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., 1975):

Փոխառություններից և օտարաբանություններից որոշակիորեն տարբերվում են բառային պատճենումները: Ինչպես գիտենք, դա այն երևույթն է, երբ մի լեզվից հայերենին է անցնում ոչ թե տվյալ բառն իր օտարաբան ձևով և իմաստով, այլ նկատի է առնվում նրա իմաստը և ըստ այդմ հայերենի է պատճենվում: Օրինակ՝ վերջին շրջանում համակարգչային տեխնիկայի և համացանցի լայն տարածման շնորհիվ մի շարք բառեր և բառակապակցություններ պատճենվել են անգլերենից կամ ռուսերենի միջոցով՝ **համակարգիչ, զննարկիչ, համացանց, առցանց, մկնիկ, շնիկ, տպիչ, դիմապատկեր, հոլովակ, փոստադր, համաշխարհային սարդոստայն, կայքերի շտեմարան, պաշտոնական կայք, հեռավար ուսուցում, սպասառու ծրագիր, նորությունների ժապավեն, վազող տող, հաճախորդ ծրագիր, ակնթարթային հաղորդակցման ծրագիր** և այլն (handbook.armedu.am/?p=authors): Ճիշտ է, նշված կազմությունները հայերենի բառապաշարում կային, սակայն պատճենման հետևանքով ձեռք են բերել նոր իմաստներ:

Պատճենումները կատարվում են տարբեր ձևերով և եղանակներով, որոնցից նշելի են հիմնական երկու տեսակ՝ 1) **ուղղակի պատճենում**, օրինակ՝ ռուսերեն՝ *уличное движение* – հայերեն՝ *փողոցային երթևեկություն*, ռուսերեն՝ *самолет* – հայերեն՝ *ինքնաթիռ*, ռուսերեն՝ *подпольный*, հայերեն՝ *ընդհալակյա*, ռուսերեն՝ *найти общий язык*, հայերեն՝ *ընդհանուր լեզու գտնել* և այլն, 2) **անուղղակի պատճենում**, օրինակ՝ ռուսերեն՝ *железная дорога* – հայերեն՝ *երկաթուղի*, ռուսերեն՝ *поезд* – հայերեն՝ *գնացք*, ռուսերեն՝ *детский сад* – հայերեն՝ *մանկապարտեզ*, ռուսերեն՝ *удовольствие*, հայերեն՝ *գոհունակություն, հաճույք* և այլն (**Մուրվալյան Ա., 1955**):

Լեզվաբանները փաստում են, որ «ռուսերենից պատճենումներն ընդհանրապես, բառապատճենումները՝ մասնավորապես, որոշ տեղաշարժեր են առաջ բերել արդի արևելահայերենի ձևաբանական ու շարահյուսական մի շարք կարգերում» (**Բեդիրյան Պ., Հեքեքյան Ն., 1982**):

Կան բառային և բառակապակցական պատճենումների բավականին անսովոր ձևեր: Օրինակ՝ համեմատենք ուսերեն *чащник* և հայերեն *թեյնիկ* բառերը: Վերջինս ուսերեն *чащник* «թեյաման» բառի պատճենումն է, որ նկատի ունենալով ուսերեն *чащ-* և *-ник* բաղադրիչները (արմատ՝ *чай* և ածանց՝ *-ник*) հայերնում կազմվել է *թեյնիկ* (արմատ՝ *թեյ* և ածանց՝ *-նիկ*): *Թեյ* բառը, որը Չինաստանի հյուսիսում ուներ *չայ*, իսկ հարավում՝ *թեյ* հնչյունական զուգաձևությունները (Աղայան Է., 1987), ևս օտար է կամ փոխառյալ, ինչպես որ *թեյնիկ* բառի երկրորդ բաղադրիչը՝ *-նիկ*, ուսերեն ձև է: Սա կարելի է կոչել կիսապատճենում կամ այլաձև («տարօրինակ») պատճենում: Կիսապատճենման օրինակներ են նաև հետևյալ նորակազմությունները՝ կատարված բառաբարդման, ածանցման կամ բառակապակցական միջոցներով. *հայլենդ*, *հիպերիդում*, *հիպերիքստ*, *կոդավորում*, *հայկական ֆորում*, *բջջային օպերատոր*, *օպերացիոն համակարգ*, *լազերային սկավառակ*, *դոմենային անվանում*, *ինտերնետ-պարբերական*, *վեբ-սպասարկու* և այլն:

Հայերենում փոխառություն է նորմա բառը, որ հաճախ թարգմանում ենք *կանոն*՝ երբեմն առանց ճանաչելու, որ *կանոն*-ը նույնպես փոխառություն է, որը հունարենում ուներ «եղեգի ցողուն» իմաստը: Ավելին՝ *կանոն* ձևաիմաստային միավորի հնչյունական տարբերակն է *քանոն* բառը, որը նույնպես անճանաչելի է: Այնպես որ, հայերենում ունենք *նորմա*, *կանոն* և *քանոն* բառերը, որոնք փոխառյալ են, և արդի հայերենում որպես օտարաբանություն չեն ընկալվում, քանի որ իրենց արտահայտած իմաստով և ձևով ծուլվել են հայերենի բառապաշարին: Այս կարգի փոխառությունների թիվը բավականին շատ է և հետաքրքիր: Օրինակ՝ պարսկերեն *شاگرد* (շագերդ), հայերեն՝ *աշակերտ*, *کفش* (ք'ավշ), որից՝ հայերեն՝ *կաշ+իկ* > *կոշիկ* և այլն:

Հայերենում *տարի* և *տարեկան* «ամբողջ տարվա, մեկ տարվա» բառերի դեպքում գործ ունենք բառակազմական իրողության հետ. երկրորդը կազմված է առաջինից՝ *-ական* ածանցով՝ *տարի+ական*, ընդ որում՝ *իա>ե* հնչյունափոխությամբ: Մյուս կողմից՝ *տարեկան*-ը, ըստ Էդ. Աղայանի

բացատրական բառարանի, ունի շուրջ մեկ տասնյակ իմաստներ, որոնցից մեկը գոյական է. նշանակում է «մեկ տարում աճող բույս. աշորա»: Տվյալ դեպքում *տարի* բառի և *ական* ածանցի միացման միջոցով ունեցանք նոր բառիմաստ՝ *տարեկան*՝ որպես բուսատեսակի անվանում:

Օրինակ՝ «Բուռնում սովորել եմ հինգ *տարի*». «Յոթ *տարեկանում* գնացել եմ դպրոց»: «*Տարեկանի* դաշտը պատվել է մոլախոտով» և այլն:

Մյուս կողմից՝ բերված օրինակներում նկատում ենք տարբեր խոսքի մասերի միջև անցումներ. գոյականից անցում ածականի՝ **տարի – տարեկան**, ածականից անցում գոյականի՝ **տարեկան – տարեկան** (բուսատեսակ): Այդպես նաև **ժամանակ** բառի դեպքում՝ իբրև գոյական կամ մակբայ. **ժամանակ** «օրվա մի պահ» («Տուն գնալու ժամանակն է») և **ժամանակ** «ժամանակի հատված՝ տարի, դար և այլն» («Ժամանակը իր վախճանին կհասնի եվ արևը մի բուռ մոխիր կդառնա» (**Խսահակյան Ավ.**, <https://times.am/259216/>), «Ուտելու *ժամանակ* չեն խոսում» և այլն: Տարբեր լեզուների միջև կատարվող շփումների հետևանքով տեղի են ունենում բառապաշարային միավորների՝ բառերի փոխանցումներ, որն ընդունված է լայն իմաստով կոչել փոխառություններ, օտարաբանություններ, պատճենումներ և այլն:

Վերջին տարիներին հայերենին են անցել օտար բառեր և բառապատճենումներ՝ հատկապես անգլերենից, մասամբ նաև եվրոպական այլ լեզուներից, ընդ որում ոչ միայն Հայաստանում հիմնական բնակվողների, այլև սփյուռքահայ բանավոր և այլ պայմաններում հանդես եկող խոսքում. օրինակ՝ *գաջեթ, թաք, պլանշետ, քարտ, բանկոմատ, տերմինալ, գեյթ, բլոգեր, սպամ, ֆայլ, բուրիկ, ֆորում* և այլն: Մայրենի լեզվով հաղորդակցվողները հաճախ որոնում և առաջարկում են օտար բառերի հայերեն հաջողված համարժեքներ:

Կան օրինակներ, որոնցում օտարլեզվյան-խոսակցական բառի կամ օտար հապավման դիմաց հայերենում ունենք գրական պատճենում. օրինակ՝ *մարշրուտկա – երթուղային*, կամ՝ *երթուղային տաքսի, աստանովկա – ավտոբուսի կանգառ, դիսպետչերանոց – երթակարգավորման կետ*, ռուսերեն՝ *сберкасса –*

հայերեն՝ *խնայողամարկդ, շոպինգ – առևտուր, մարկետ - խանութ, մարկետինգ – արևտուր*, ռուսերեն՝ *ярмарка* – հայերեն՝ *տոնավաճառ* և այլն:

Հանդիպում են նաև սխալ, իմաստի շփոթման հետևանքով կերտված պատճենումներ. օրինակ՝ *պանդոկ* «օթևան. գիշերելու տեղ» - հայերեն՝ *ռեստորան* «ճաշարան. խնջույքի տեղ» և այլն:

Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում օտարաբանությունը նկատելի է ոչ միայն բառերի, կապակցությունների, անվանումների գործածության դեպքում, այլև դրանց ոչ ճիշտ՝ օտարալեզվյան արտասանության մեջ: Դրանց գումարած քաղաքային միջավայրում գործածվող գովազդների և այլ միջոցների գրավոր ներկայացումը՝ խանութների, սպասարկման մյուս ոլորտների, հիմնարկների վահանակներում այլ լեզվով նշումները, որոնց մի մասը ևս պատճենման հետևանքով է ստեղծված: Եվրոպական լեզուներին մոտենում են արևելյան մեկերկու լեզուներով գովազդների նշումները, թեկուզ հայերեն գրերով: Շատ տարածված են նաև հատկապես առևտրի կենտրոնների և զանազան կազմակերպությունների՝ թեկուզ երբեմն հայերեն բաղադրիչներով անհասկանալի հապավումներով անվանումները, որոնք ժամանակի ընթացքում սերտաճում են մեր բառապաշարում: Օրինակ՝ *ԱՄԻՕ* բանկ, **ԳԱԱ «Գիտությունների ազգային ակադեմիա»**, **ԳԱՄԿ «գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն»**, **ԳԹԿ «գնահատման և թեստավորման կենտրոն»**, **ԳՄԿ «գիտակրթական միջազգային կենտրոն»**, **ԱՍՀՆ «աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն»**, **ԿԳՄՄՆ «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն»**, **ՓԴԾ «փոքր դրամաշնորհների ծրագիր»** և այլն (Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., 2007, langcom.am): Մասնագիտական դիտարկման համապատասխան՝ «Հապավման այս տեսակի մեջ ակտիվացում սկսվեց բոլորովին վերջերս. համաշխարհային, տարածաշրջանային, հայաստանյան և համազգային նոր, բեկումնային զարգացումները հանգեցրին մեծաթիվ նորագույն հապավումների

կազմության և բազմաթիվ փոխառությունների» (**Գյուրջիյան Դ., Հեքեքյան Ն., 2003**), ուստի թեման տարբերակային է, միշտ արդիական և ուսումնասիրելի:

Այս կացությունը լեզվի գործածության նոր իրողություն է, որքան էլ այն համարենք ոչ տեղին, հայերենի հաշվին հանդես եկող: Ո՞րն է նման պարագայում այն ուղին, որը տանում է դեպի հայերենի անաղարտություն, առավել ևս, դպրոցական և բուհական կրթության ասպարեզում՝ կանոնականություն, պատշաճություն:

Կարծում ենք՝ ամենից առաջ չափավորությունը, որից այն կողմ՝ լեզվական խաթարումն է, գրական նորմի կամ կանոնի անկանոնությունը, որն այնքան էլ նպաստավոր չէ ամեն մի լեզվի, այդպես և ժամանակակից հայերենի գործածության, ներքին կայունության և զարգացման համար: Մի շարք մասնագետներ ևս կարծում են, որ «յուրաքանչյուր լեզու, այնուամենայնիվ, իր դռները լայն չի բացում օտար բառերի առջև և փորձում է դրանք փոխարինել սեփական բառային կազմի նոր (նորակազմություններ) կամ նախկին (իմաստային նորաբանություններ) միավորներով» (**Ավետիսյան Յու., Թեյլան Լ., Սարգսյան Լ., 2020**):

Օտար բառերի, փոխառությունների և պատճենումների ուսուցման ընթացքում առաջ են գալիս տարբեր կարգի դժվարություններ, դրանք խնդիրներ են, որոնք ենթադրում են որոշակի լուծումներ:

Ուսուցման գործում էական է օտար բառի կամ բառակապակցության բուն իմաստի վերաբերյալ ճիշտ պատկերացումը, անհրաժեշտ է դիտել տվյալ բառն օտար լեզվի խոսքային համատեքստում: Այնուհետև, կարևոր է նաև հայերեն բառի, առհասարակ բառապաշարի իմացությունը, որի հիմամբ էլ հնարավոր է լինում ճիշտ բացատրել փոխառության կամ պատճենման հնարավորությունը կամ անհրաժեշտությունը: Օրախնդիր է ճիշտ եղանակների գործադրումը, և միայն հաջողված և անհրաժեշտ պատճենումները կամ թարգմանությունները շրջանառության մեջ դնելը: Արհեստական, շինծու բառապատճենումները հաճախ երկար կյանք չեն ունենում և մոռացվում են:

Ուսուցումը պիտի իրականացվի ոչ միայն ամեն բառի կամ լեզվական նման միավորի դեպքում, այլև առհասարակ լեզուների փոխադարձ առնչության դիտարկման առումով, քանի որ, ի վերջո, այդ ճանապարհով նույնպես, լեզուների միջև տեղի են ունենում փոխլրացումներ, ապա և՛ հարստացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ներկայիս գերարդիական հաղորդակցության բազմազան միջոցները լայն հնարավորություններ են ընձեռում, որպեսզի այլալեզու հանրությունները շփվեն միմյանց հետ ու համագործակցեն, որը հանգեցնում է լեզվական և մշակութային փոխներթափանցման, տարբեր բարքերի ու սովորույթների բախման և հանդուրժողականության: XXI դարի այս շոնդալից ընթացքը անկարելի է կասեցնել, ուստի անհրաժեշտ է խելամիտ ճկունություն ու զգոնություն՝ առաջադեմն ու օգտակարը յուրացնելու, այսպանելին մերժելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է. (1987)**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Ավետիսյան Յու., Թեյլան Լ., Սարգսյան Լ. (2020)**, Արդի հայերենի բառապաշարը, Երևան, ԵՊՀ հրատ.:
3. **Բեդիրյան Պ., Հեքեքյան Ն. (1982)**, Ռուսերենից նորագույն բառապատճենումների մասին, «Լրաբեր», № 12, ՀՍՍՀ ԳԱ հրատ., https://arar.sci.am/Content/36161/file_0.pdf
4. **Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն. (2003)**, Տարբերակայնությունը հայերենի նորագույն տառային հապավումներում, «Հայագիտություն և զուգահեռական լեզվաբանություն», Գ պրակ, Երևան, «Լինգվա» հրատ.:
5. **Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն. (2007)**, Հայերենում գործածվող տառային հապավումների բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ.:
6. **Մուրվալյան Ա. (1955)**, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

7. **Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ. (1975)**, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
8. **Պետրոսյան Հ. (1987)**, Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.:
9. **Պողոսյան Պ. (1990)**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 1, Երևան, ԵՊՀ հրատ.:
10. **Քամալյան Ա. (2015)**, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 2 (17), Երևան, ԵՊՀ հրատ.:
11. old.yasu.am/files/07A_Kamalyan.pdf
12. handbook.armedu.am/?p=authors-ԿՏԱԿ
13. langcom.am - Լեզվի կոմիտե
14. <https://times.am/259216/> Իսահակյան Ավ.
15. langcom.am- Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.

REFERENCES

1. **Aghayan E. (1987)**, Lezvabanowt'yan himownqner /Fundamentals of Linguistics/, Yerevan, YSU Publishing House.
2. **Avetisyan Yu., Telyan L., Sargsyan L. (2020)**, Ardi hayereni bar'apashary' /Modern Armenian Vocabulary/, Yerevan, YSU Publishing House.
3. **Bediryan P., Hekekyan N. (1982)**, R'owserenic noragowyn bar'apattwenowmneri masin /On the latest word copying from Russian/, "Lraber", № 12, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, https://arar.sci.am/Content/36161/file_0.pdf
4. **Gyurjinyan D., Hekekyan N. (2003)**, Tarberakaynowt'yowny' hayereni noragowyn tar'ayin hapavowmnerowm /Diversity in the latest letter abbreviations of Armenian/, "Armenology and Comparative Linguistics", G prak, Yerevan, "Lingva" publishing house.

5. **Gyurjinyan D., Hekekyan N. (2007)**, Hayerenowm gorc'ac'vogh tar'ayin hapavowmneri bar'aran /Dictionary of Letter Abbreviations Used in Armenian/, Yerevan, "Edit Print" Publishing House.
6. **Murvalyan A. (1955)**, Hayoc lezvi bar'ayin kazmy' /Vocabulary of the Armenian language/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
7. **Petrosyan H., Galstyan S., Gharagyulyan T. (1975)**, Lezvabanakan bar'aran /Linguistic Dictionary/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
8. **Petrosyan H. (1987)**, Hayerenagitakan bar'aran /Armenian Linguistic Dictionary/, Yerevan, "Hayastan" Publishing House.
9. **Poghosyan P. (1990)**, Xosqi mshakowyt'i ev otwagitowt'yan himownqner /Fundamentals of Speech Culture and Stylistics/, Book 1, Yerevan, YSU Publishing House.
10. **Kamalyan A. (2015)**, P'oxar'owt'yown, o'tarabanowt'yown ev e'kzotizm /Borrowing, foreign studies and exoticism/, "Journal of Yerevan University. Philology", № 2 (17), Yerevan, YSU Publishing House.
11. old.ysu.am/files/07A_Kamalyan.pdf
12. handbook.armedu.am/?p=authors- KTAK
13. langcom.am - Language Committee
14. [https://times.am/259216/-](https://times.am/259216/) Isahakyan Av.
15. langcom.am- Gyurjinyan D., Hekekyan N.

Сасун Амбарцумян

Калькированные слова современного армянского языка,

о их действиях и вопросах обучения

Заключение

Ключевые слова и выражения: армянский язык, словарный запас, значение слова, калькирование, существительное, прилагательное.

В статье в основном представлены прямые и косвенные дословные калькирование современного армянского языка: так же говорится об их употреблении в речи и вопросах обучения. Известно, что внутреннее обогащение или развитие словарного запаса происходит как путем образования новых слов, так и путем использования уже существующих слов с новыми значениями. Часть лексики современного армянского языка составляют калькированные слова, которые имеют своеобразную специфику и требуют особого изучения. В статье представлены различные методы и средства этого вида заимствования в современном армянском языке, а также эффективные подходы к их преподаванию. Представленные языковые реалии проиллюстрированы соответствующими примерами. Разновидности современной коммуникации предоставляют широкие возможности сотрудничества для общин говорящим на разных языках. Это становится основой языкового и культурного взаимопроникновения, столкновения различных обычаев и традиций, толерантности.

Sasun Hambardzumyan

**Traced words of the modern Armenian language,
about their actions and issues of teaching**

Conclusion

Key words and expressions: armenian language, vocabulary, word meaning, copying, noun, adjective.

The article mainly presents direct and indirect literal calques of the modern Armenian language: it also discusses their use in speech and issues of teaching. It is known that internal enrichment or development of vocabulary occurs both through the formation of new words and through the use of existing words with new meanings.

Part of the vocabulary of the modern Armenian language consists of calqued words, which have their own specific features and require special study. The article presents various methods and means of this type of borrowing in the modern Armenian language, as well as effective approaches to their teaching. The presented linguistic realities are illustrated with relevant examples. Modern forms of communication provide ample opportunities for cooperation among communities speaking different languages. This becomes the basis for linguistic and cultural interpenetration, the clash of different customs and traditions, and tolerance.

Սասուն Համբարձումյան – Բանասիրական գիտ. թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս: Գիտական ուսումնասիրությունները վերաբերում են ժամանակակից հայերենի բառապաշարի, ինչպես նաև դասավանդման խնդիրներին: Հեղինակ է վեց գրքի և երեք տասնյակ հոդվածների: vetarmenia@gmail.com

Сасун Амбарцумян - Кандидат филологических наук, преподаватель кафедры арменоведения государственного университета имени В. Брюсова. Научные исследования касаются словарного состава современного армянского языка, а также вопросов преподавания. Является автором 6 книг и 30 статей. vetarmenia@gmail.com

Sasun Hambardzumyan- Candidate of Philological Sciences, lecturer at the Department of Armenian Studies at V. Bryusov State University. His scientific research concerns the vocabulary of the modern Armenian language, as well as teaching issues. He is the author of 6 books and a 30 articles. vetarmenia@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 27.01.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 11.02.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.